



ԵՐԵՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ ԾԱՓԱՀԱՐՈՒՄ ԵՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

Փարիզում հրատարակվող «Միտուար-Սպրենտ» մարմնամարզական պատկերազարդ հանդեսի մեջ զնահատական խանդավառ տողեր են նվիրված սովետական մարզիկների, որոնց թվում նաև հայ մարզիկների — Ա. Ազատյանի, Մուրադովի և Հ. Շահինյանի, նրանց կատարած հիանալի մարզախաղերի համար: Հանդեսի առաջին շապկի կենտրոնում կարդում ենք հետևյալ տողերը.

«Սթանչելի ներկայացում «Սպորտի պալատ»ում, որտեղ երկու օր 30.000 մարդիկ ակնատես եղան սովետական մարզիկների ելույթներին, որոնք երբեք չէին եղել Ֆրանսիայում պաշտոնական մրցումների համար և որոնք հիացում պատճառեցին անգամ ամենափորձառու մասնագետներին: Այստեղ չի կարելի չսթանչանալ խմբի կրտսերագույնի՝ Ա. Ազատյանի «երկաթե խաչ»ի վրա, բարդ ու դժվարին մի մարզախաղ, որ արժեքավորեց ախտյանի (չեմպիոն) տպավորիչ ու նուրբ դնդերները»:

Միևնույն հանդեսի մեջ Անտրե Ժակուարի ստորագրությամբ հրատարակված մի հոդվածում, սովետական սպորտմենների մարզախաղերի մասին գրվել են հետևյալ տողերը.

«Շաբաթ և կիրակի երեկոները «Սպորտի պալատ»ում Ֆրանսիա—ՍՍՍՄ խառն մրցումի ժամանակ սովետական մարզիկները ձեռք բերեցին աննախընթաց հաջողություն: Այլ

կերպ էլ լինել չէր կարող, այլապես, մինչ այդ մեր երկրին անծանոթ սովետական մարզիկներով, որոնք Փարիզ եկան արդեն զարդարված փառապանծ պատվանշաններով:

Չենք կարծում չափազանցած լինել ասելով, թե բոլոր նրանք, ովքեր բախտն ունեցան ներկա գտնվելու այդ ելույթին, անմոռանալի կարահեն նրա հիշատակը, որովհետև այն, ինչ սովետական մարդիկ կարող են անել մարզական ասպարեզում, աներևակայելի է պարզապես: Սովետական մարզիկները գլեցին—անցան մարդկային կարելիության սահմանը: Մենք տեսանք նրանց շրջապատյալ կատարելիս և ամենադժվարին ու անհավատալի վարժությունների ժամանակ, որոնք կատարում են այնպիսի դյուրության մեջ, որ մեզ թվում է, թե մեզանից յուրաքանչյուրը կարող է միևնույն բանն անել:

Սովետական մարզիկների մասին խոսելիս պետքն ես գգում հիշելու բոլորին, որովհետև սթանչելի են բոլորն էլ: Քաջահոտ Չոսկարինից և Շախլինից հետո, նրանցից կրտսերագույնը՝ Ազատյան հսկան ու նրբակազմ Մուրադովն ու Շահինյանը, որոնք զմայլելի տպավորություն թողեցին մեզ վրա»:

«Միտուար-Սպրենտ» հանդեսի խմբագրությունը կենտրոնի էջերի վրա դրել է երկու հայ մարզիկների՝ Ազատյանի և Շահինյանի կլիշեները՝ մարզախաղը կատարելիս:

ՅԱՊՈՆԱՑԻ ՆԿԱՐՉՈՒՇԻԻ ՄԸ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«Սովետական կինը» պարբերաթերթը (անգլերեն լեզվով հրատարակությունը) դեկտեմբեր ամսի համարին մեջ կհրատարակի հոդված մը ստորագրված Ակամատու Տոսահիկոյի կողմն, յապոնացի նկարչուհի, որ այցելած է Սովետական Միություն և այս առթիվ նաև եղած է Սովետական Հայաստան:

տան: Հոգվածեն կքաղենք անոր տպավորությունները Երևանի մասին, ինչպես նաև անոր դժած զարգածաղիկները:

Մոսկվային ինքնաթիռ մը մեզ կփոխադրեն Երևան, երգի և պարի արևաշող երկիրը: Հայաստանի մայրաքաղաք Երևանը իրապես քաղաք մըն է ողողված արևու ճառագայթներով:

գայթններով: Հրաշալի նոր շենքերը փոխարինած են հին և խարխուղ հողաշեն տուններում: Կառուցումներում համար գործածված նյութը մանիշակագույն և վարդագույն գեղեցիկ քարն է, որ կգտնվի Հայաստանի լեռներում մեջ: Երևանը կդառնա նորագույն քաղաք մը:

Ինձ շատ դուր եկան շենքերու և հուշարձաններու ազգային բնույթ ունեցող զարդաքանդակները: Գծադրությունները իրապես արտաքու կարգի էին, հրաշալի՝ ինչպես հին գրականությունը, պարզ՝ հնամենի աղոթքներու նման, խոր և ջինջ՝ ինչպես մարդկային ամենագեղեցիկ հույսերը...

Այստեղ՝ հինը կապի ներկայով, և այժմ հատակորեն կտեսնենք ինչպես վկերտվի ապագա մշակույթը, մշակույթ մը, ուր զեկորատիվ արվեստի նմուշները անխոս վկաներն են հայկական ճարտարապետության:

Հայաստան հարավային երկիր մըն է: Անոր փողոցները միշտ ողողված են արևու ճառագայթներով: Եվ, Երևանը, միաժամանակ հին և նոր քաղաք մըն է, նոր կյանքի մը մայրաքաղաքը:

Հայաստանի մեջ, լուրաքանչյուր տղամարդ ու կին կտիրե պարել ու երգել: Անոնց ձայները ինձի կհիշեցնեն «տատեկոտո»ներու հնչյունները (յապոնական ժողովրդական գործիք մը):

Հայերը շատ գեղեցիկ ժողովուրդ մըն են: Տղամարդիկ թխագույն են, արծվանման դիմագծերով: Կիները նույնպես մուգ գույնի են և գեղձերու նման տեսք մը ունեն: Մենք յապոնացի կիներս, շուրջ մեջ մնացինք անոնց գեղեցկության առջև:

Իմ առաջին տպավորությունը Հայաստանի մասին, ոչ միայն փրեւ արևու, բույսի, այլև երգերու և պարերու երկրի մը, հաստատվեցավ հետևյալ տպավորություններով:

«Ուր որ գացի, ըլլա քաղաք կամ կոլտընտեսություն, այնտեղ լսեցի շատ երգեր և տեսա պեսպիստն պարեր:

Երեկոյան, ազգային առանձնահատուկ երգերու հնչյուններն տարված երբ կպառկեինք հարց կոտայինք մեզի՝ այս ուրախ հայերը արդյոք ի՞նչ ժամանակ ունին քնանալու:

Երեանեն կրկին մեկնեցանք Թիֆլիս... Երկվանի, ինչպես նաև Լենինգրադի մեջ շատ արվեստագետներ ճանչցա (նկարիչներ, քանդակագործներ) ամենքն ալ, լավ հազնված էին, իրենց սեփական արհեստանոցներում մեջ կաշխատեին և լավ վարձատրված էին»:

«ՆՈՐ ԿՅԱՆՔ», Բովսաբես, 31 հունվարի 1954 թ.)

